

Վ Ա Յ Ո Յ Ձ Ո Ր

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Դաշնան.—Դաշտանն սկսւում է 15-16 տարեկան հասակում: Սովորաբար տեղում է 4-6 երբեմն և՛ աւելի օր: Այս ժամանակամիջոցում եկեղեցի չեն գնում, հաց չեն թխում, խմոր չեն հունցում, կերակուր չեն եփում, որովհետեւ «մեղաւոր» են համարւում:

Առաջին դաշտանը կտրուելուց յետոյ քահանային ջուր են օրհնել տալիս և այդ ջրով լուացւում և լողանում են, որպէսզի սրբուեն:

Եթէ դաշտանը սաստիկ է լինում, մէջքին եախու են ձգում և մեծ քանակութեամբ մեղր ուտում, որպէսզի շուտով կտրուի:

Ամլոթիւն.—Այստեղ ևս ամլութիւնն աստուածային պատիժ է համարւում և ամուլ կինը նախատւում է թէ ամուսնուց և թէ հասարակութիւնից:

Ամլութեան առաջն առնելու համար դիմում են հետեւեալ միջոցներին:

ա. Ուխտ են գնում Արկազի Ս. Խաչ և Պարսկաստանի ս. Ստեփանոս Նախավկայի վանքերը (Դարաշամբում): Վերջինումս կայ մի հրաշագործ աղբիւր, որ շատ ամուլ կանանց ուխտը կատարել է: Սովորաբար սրբի մօտից մի իր են գողանում, և երբ սուրբը որդի է տալիս, այդ իրը մի նուէրի հետ միասին վերադարձնում են: Երեխան անկնունք մի քանի տարի պահում են և բերում այդ մու-

¹⁾ Տես «Ազգագրական Հանդէս» գիրք XIII

րազատու վանքում մկրտում. քառասունքին էլ մագերը, որ մինչև այդ ժամանակ երբեք չեն կտրել, խուզում են և տանում մի որևէ գերեզմանի մէջ թաղում, որպէսզի երկարակեաց լինի:

բ. Տեառնընդառաջի երեկոյին, երբ կտուրների վրայ «դրոգառանջ» է վառուում, մի թուկ են կապում ամուլ կնոջ մէջքին, մի երեխայ դնում գիրկը և կտուրից քաշելով հերթիկից հանում¹⁾: Այստեղ նա երեք անգամ անցնում դառնում է «դրոգառանջի» կրակի վրայով և ոտաշորի ծայրը փոքր ինչ վառում:

գ. Վերցնում են թխսի տակ դրուած այն ձուն, որից ամենից առաջ ձագ է դուրս եկել, և սրանով քառասուն անգամ ջուր են ածում ամուլ կնոջ գլխին:

դ. Մի կուժ ջուր են դնում մի մահմեդականի գերեզմանի վրայ, գիրշերը փնում է, առաւօտը բերում են և յանկարծ ածում ամուլ կնոջ գլխին:

ե. Նոր ցլնած շան վրայով երեք անգամ անցնում է ամուլ կինը ասելով. «Իմը քեզ, բոնը ինձ», յուսալով ստանալ նրա բեղմնաւորութիւնը:

զ. Լարախաղացի գլխին դրած ջրից, ոմանք էլ նաւթ, են խմում:

Արգանդի պտուղը վիժելու համար կնիշիկում գնում կանգնում են ձորում հոսող առուակի բարձր և ուժեղ ջրընկեցի տակ, փորը ճմլում են, փայտի վրայ են ընկնում, երկանք են դնում փորի վրայ և աղում: Ընդհանրապէս աշխատում են առաջին երկու ամիսների ընթացքում վիժել:

Յղութեան միջոցում կինը տանից ձու է գողանում, խաշում, դնում կօի կանթի վրայ, յետոյ վերցնում ուտում է, որպէսզի ապագայ երեխան ծիծաղելիս այտի վրայ փռիկներ յառաջանան:

Ուխտատեղիում «օխնութիւնը» (սրբի գերեզմանա-

¹⁾ Պաշիկում Մկօի կնոջը վեր հանելիս թուր կտրուել է, կինը ընկել է վայր և սաստիկ փնասուել:

հող) ձգում է բերանը և քորում իւր այն տեղը, որին համապատասխան կը կամենար, որ ծնունդիք երեխան խալ ունենար:

Յղութեան ընթացքում շարունակում են առաջուայ նման աշխատել, որովհետեւ կարծում են, որ եթէ չաշխատեն, կը գերանան և երկունքը դժուարութեամբ կը կատարուի: Ուսչիկում Նանուխը (Նանէն) օրուայ ընթացքում 70 փութ ցորեն է լուացել և գիշերը հեշտութեամբ ազատուել, Անահին (Անահիտը) վեց փութ հաց է թխել և հետեւեալ օրը ազատուել, Զանոն կալ քշելիս ցաւը բռնում է, ամուսնուց իրաւունք է խնդրում տուն գնալու՝ չի թողնում, Էլ ամաչում է պատճառը ասի, մտնում է մարաքը և այնտեղ ազատուում:

Ո՛չ մի կերակրից կամ խմիչքից չեն զգուշանում, ընդհակառակը շրջապատողներն աշխատում են նրա բոլոր քմահաճոյքները կատարել, որպէսզի փառ չհասնի երեխային, որովհետեւ կարծում են, թէ նրա պատճառով են «մըտկափոխ» լինում—այս կամ այն բանը ցանկանում ուտել: Այսպէս պատմում են, թէ մի թագաւոր իւր յղի կնոջ հետ ճանապարհորդելիս, վերջինս ցելի միջից վերցնում է նուան մի հատիկ և ուտում: Թագաւորը զայրանում է թէ քանի այդքան որկրամոլ ես, որ ցելսոտ հատիկը ուտում ես, կարող ես շատ բան թոյլ տալ քեզ, և խփում, սպանում է նրան: Իմաստունները զայլա բաց են անում թագուհու փորը և ցոյց են տալիս թագաւորին՝ որ ցելսոտ հատիկը արգանդի երեխայի բերանումն է, հետեապէս և՛ նրա պատճառով էր նա այդքան որկրամոլ դարձել:

Միակ բանը, որից յիշաւի, յղի կինը զգուշանում է, այդ այն է, որ երեխան վատ մարդու, թուրքի, շան, իշի, «երեսին չխաղայ», այսինքն երեխան որովայնի մէջ առաջին անգամ շարժուելիս նրա հանդէպ կանգնած չլինեն վերոյիշեալներից որեւէ մինը, որովհետեւ կարծում են, որ այդ դէպքում երեխան նրա բնաւորութիւնը կստանայ:

Այս պատճառով էլ ոճ է դարձել ասել. շան, իշի դէմ է խաղացել:

Երկունքից առաջ երեխայի սեռը որոշելու համար նայում են մօր ծծերին, եթէ ծայրը մոխրագոյն է, արու է լինելու, իսկ եթէ սովորական գոյնին է՝ աղջիկ: Նաև աղ են ածում ծծի պտկի վրայ և դիտում. եթէ հալուի՝ աղջիկ է լինելու, իսկ եթէ ոչ՝ տղայ:

Ծննդեան օրերը մօտենալիս հաղորդութիւն են առնում, երկիւղ կրելով, թէ մի գուցէ չկարողանան աղատուիլ: Միևնոյն ժամանակ հրաւիրում են ծննդկանի մօրը, որովհետև ընդհանրապէս տիրում է այն կարծիքը, թէ երկունքը հեշտութեամբ է անցնում, երբ մայրը ներկայ է լինում: Երկունքի ժամանակ կանչում են տատմէրին, իսկ յուսահատական դէպքում՝ սափրիչին, որ ածելով կտրատում է երեխային և այդպէս աղատում մօրը մահից:

Ծննդաբերութիւնը հեշտացնելու համար դիմում են հետևեալ միջոցներին:

ա. Ծննդկան կնոջ պառկած սենեակի դռան շէմքի մօտ մի փոքրիկ փոս են փորում և քառասուն դարի ածում մէջը, ապա մի ձի են բերում և անցկացնում այդ գարու վրայով, շրջում սենեակում ու դուրս հանում: Սա մի ուխտ է, որ անում են ծննդկանի կողմից, իբր թէ ինչպէս ձին անցաւ իւր սիրած գարու վրայից առանց ճարակելու, այնպէս և ծննդկանը քառասուն օր կանցկացնի առանց ամուսնական կեանքը ճաշակելու:

Մի կին բարձրանում է կտուրը և ասում՝ Դու բերում ես՝ բեր, թէ չես բերում՝ ես բերում եմ և հերթիկից առնուազը երեք ձու է վայր ձգում՝ կոտրում:

Մի աման ալիւրի վրայ մի կտոր աղ են դնում և երեք անգամ ծննդկանի գլխին պտտացնում են և տանում մի աղքատի տալիս:

Ծննդկանի գլխին տղամարդու գլխարկ են ծածկում, որպէսզի չարերը կարծեն, թէ նա տղամարդ է և հեռանան:

Մի քաջ տղամարդու են կանչում, որ ձեռք տայ ծր-
նընդկանին, որպէսզի չարքերը նրանից վախենալով հեռա-
նան:

Նոյն նպատակով մի ձի են բերում և ծննդկանի
գրկում դարի տալիս:

Եւ կամ սանձը ձգում են ծննդկանի բերանը, կանչում
են օձի բերանից գորտին ազատող կնոջը կամ տղամար-
դուն, որ իւր քղանցքով երեք անգամ ջուր տայ խմելու
ծննդկանին: Այսպիսի կանանցից յայտնի է Սաչիկեցի Սար-
գսի կինը:

բ. Բամբակեայ կտորներ են վառում ու ծուխը շըն-
չել ու հոտոտել տալիս ծննդկանին, որպէսզի բիթն ու
բերանը ծխոտուին չարքերը այդ տեղերից չմտնեն ու ջի-
գարը տանեն:

գ. Ամուսինը բարձրանում է կտուրը և երեք անգամ
հրացան արձակում, որպէսզի չարքերը փախչեն:

դ. Ծննդկանի մօտ են բերում մի շուն, աչքերը կա-
պում են, և մէջքին մի կատու նստեցնում, նախապէս
բերանը և ճանկերը կապելով, որպէսզի չկծի կամ ճանկռէ.
ապա այսպէս՝ կատուն շան մէջքին բռնած՝ ման են ածում
սենեակում, որպէսզի չար ոգիները այս անսովոր բանից
վախենան և հեռանան:

ե. Ուշագնաց եղած միջոցին՝ կարծում են, թէ ալ-
քերը մօտել են փորը և կամենում են նրա ջիգեարը հանել
տանել. որպէսզի սրանց ուշքը գրաւեն, և յանկարծակի
դուրս հանեն այնտեղից, սկսում են դափ և զուռնա ածել
ծննդկանի մօտ:

զ. Ի վերջոյ ծննդկանը դիմում է Զորեքշաբաթամուտ,
Ուրբաթամուտ և Կիրակնամուտ ոգիների օգնութեան,
որոնցից առաջին երկուսը կանացի, իսկ երրորդը՝ շաբաթ
երեկոյեան երիտասարդի, իսկ կիրակի՝ ծերունու կերպա-
րանքով են երևում:

Երկուքի ժամանակ ծննդկանը չոքում է թոնրից
հեռու մի տեղ. երկու կին բռնում են նրա կռներից,

իսկ տատմայրը նստում է նրա յետևում և առնում նորա-
ծնին: Ազատուելուց յետոյ ծննդկանը մօտ մի ժամ չորքած
մնում է, որպէսզի ընկերքը ընկնի, իսկ պորտը մօտ երկու
ժամից առաջ չեն կտրում, հաւատալով, որ որքան ուշ կրտ-
րեն՝ այնքան երկարակեաց կը լինի երեխան: Պորտի
աբիւնը քսում են նորածին աղջկայ այտերին, որպէսզի
կարմիր լինին: Պորտը կտրելուց յետոյ ծննդկանին պար-
կեցնում են մէջքի վրայ՝ անկողնում, նախապէս փոքր ինչ
տաք մօխիւր ածելով տակը:

Այս ժամանակ տատմայրը ասում է նրան, թէ համա-
րիր ձեղունի գերանները, որովհետև քանիսը որ համարի,
այնքան որդի կունենայ:

Ապա տատմայրը աղ է ցանում երեխայի վրայ ¹⁾,
խանձարուրում, և երեսին ու քթին ծնուած տեղում գո-
յացած ցեխից քսում, որպէսզի չարքերը չմօտենան նրան:
Յետոյ վերցնում է նրան և դնում ծննդկանի անկողնի վը-
րայ ասելով. «Ես եմ ծանր թէ դու»: Ծննդկանը պատաս-
խանում է թէ ես, որպէսզի իւր ցաւերը պակասին, ու
ծննդաբերութեան շրջանը թեթեւութեամբ անցնի:

Երբ ընկերքը ընկնում է, թաղում են սենեակի մէջ,
երեխայի ծնուած տեղում: Եթէ ընկերքը շուտով չի ընկ-
նում, ծննդկանի փորը պինդ կապում են և ձեռքով հուփ
տալիս, ստիպելով որ նա էլ ամենայն ուժով փչէ մի սա-
փորի մէջ. կամ ընկերքի ծայրը կապում են մի տրեխից:

Մի քիչ յետոյ տատմայրը լողացնում է երեխային
ասելով. «Մուրը Քրիստոս, սուրբ Օհաննէս, սուրբ Արե-
գակ, սուրբ Լուսնակ, էս էրեխի օմըրը երկար անիք,
բախտաւոր ընի, ուրա՛ս ընի»:

Յետոյ խանձարուրում է և դնում հօր գիրկը՝ ասե-
լով. «Հէրով մէրով մենձանաս, երկար ապրիս ու ծերա-
նաս» և այլն: Յետոյ տատմայրը կրկին վերցնում է երե-
խային, բալուլի վրայ մի քիչ հաց ու աղ դնում, և իւր

¹⁾ Այժմ ոմանք այլ ևս աղ չեն ցանում, այլ աղաջրում լո-
ղացնում:

ձեռքն առնելով ծայրին երեք սպիտակ սոխ անցկացրած մի շիշ, (շամփուր), դուրս է գալիս տանից, դառնում դէպի արևելք և ասում. «Սուրբ Օհանէս, սուրբ Քրիստոս, սուրբ Հռիփսիմէ, հաւատով խոստովանիմ... աղաչեմ քեզ տէր Աստօծ, ես մեղաւոր եմ, էս երեխի փայլ տաս, շատ տաս, շուտ տաս, գետնից, երկնից ստանայ իր ուռուզին»:

Ապա մտնում է սենեակը, ձեռի շիշով չորս պատին խաչ քաշում՝ ասելով. «Պաշը, աջը քեզ պահապան», յետոյ նոյն շիշով դիծ քաշում ծննդկանի շուրջը, որ չարերը չկարողանան այդ գծից անցնել և մերձենալ ծննդկանին, և ապա երեխային դնում է ծննդկանի աջ կողքին, շիշը սոխերով նրա բարձի տակ, աւելացնելով և՛ մի դաշոյն, որպէսզի սրանց ազդեցութեամբ չարերը հալածուին:

Այս ժամանակ հրաւիրում են քահանային, որ «տունը փարատէ»: սա էլ օրհնում է մի աման ջուր և շաղ տալիս սենեակի պատերին, յատակին, որպէսզի չարերը հալածուին:

Սկսելով խնամել ծննդկանին, «խաւիծ» և մեղրով թէյ են տալիս ¹⁾: Ընդհանրապէս ծննդկանի ուտեստը մի քանի օր շատ լաւ է լինում, որովհետեւ բարեկամ կանաչ տեսութեան գալով «ծննդկանաքեղան» են բերում, որ բաղկացած է լինում զանազան կերակրներից: Տատմայրը եկող հիւրերի գիրկը դնելով նորածնին՝ մի քանի կոպէկ «պորտակտէք» է ստանում:

Երեխայի պորտը ընկնելիս թաղում են՝ եթէ աղջիկ է թո՛ղի մնուածքի (ական) մէջ, որպէսզի լաւ տնտես լինի, իսկ եթէ տղայ է՝ եկեղեցու պատի տակ՝ որ եկեղեցասէր լինի և կամ մի որևէ խանութում, որ վաճառական դառնայ և կամ հացի մէջ դրած տալիս են անասունի, որպէս զի անասնասէր լինի:

Երկու օր մի միևնոյն անկողնում, շուտ-շուտ փո-

¹⁾ Սանճու ունենալիս կինամոռնով (դառչին) կամ սև պղպեղով թէյ են խմեցնում:

փոխուող մոխրի վրայ ծննդկանին պառկեցնելուց յետոյ, երբորդ օրը տատմայրը լողացնում է նրան և երեխային, սոր անկողնի մէջ պառկեցնում, իսկ նրա տակի մոխիրն ու ցնցոտին բակի դռան շէմքի մօտ թաղում, որպէսզի երեխային աչքով չտան:

Մինչև կնունքը, որ կատարւում է սովորաբար ութ օրից յետոյ, ծննդկանը պառկած է մնում, և այս միջոցում նա պիղծ է համարւում, իրաւունք չունի իւր ձեռքն ընդհանուրի կերակրին, հացին և այլն դիպցնելու: Նրա ապսէն, գդալը, բաժակը առանձին են պահւում:

Եւ երբ նա ցանկանում է փոքր ինչ վեր կենալ, սենեակից սենեակ անցնել կամ դուրս գնալ, ձեռք մի շիշ է վերցնում, որպէսզի չարեբը չկարողանան խփել նրան:

Կնուկն նախօրէին տատմայրը մի տապակած հաւ, մի-մի շիշ գինի և օղի, մի քանի ուրիշ կերակուրների հետ տանում է քաւորենց տուն և խնդրում հետեւեալ օրը գալ երեխան կնքելու:

Նոյն երեկոյին ծննդկանի մայրը ուղարկում է մի օրօրոց և օրօրոցի ամբողջ սարքը իր թոռնիկի համար, եթէ միայն առջինեկն է:

Վաղ առաւօտեան գալիս է տատմայրը, լողացնում թէ երեխային և թէ ծննդկանին և ապա՝ մի կնոջ հետ միասին տանում է երեխային եկեղեցի, ուր գալիս է և քաւորը, բերելով իւր հետ մի կնգուղ և մի սաւան—մի քանի արշին չիթ կամ շալ:

Դարալագեազի բնիկների մէջ ևս քաւորը տոհմական է լինում և փոխւում է միայն այն ժամանակ, երբ նրա շոտը վրայ չի գալիս, այսինքն նրա մկրտած երեխաները շուտով մեռնում են: Քաւորին չափազանց յարգում են և պատւում, մանաւանդ սանամայրը, որ ի նշան իւր անչափ յարգանքի՝ ցմահ անխօս է մնում նրա հետ և մինչև անգամ նրան տեսնելիս փախչում թաք է կենում:

Մկրտութեան խորհուրդը կատարելուց յետոյ քաւորը գրկում է երեխային, ծածկելով նրան իւր բերած սաւա-

նով և քահանայի առաջնորդութեամբ գնում ծննդկանի տունը: Քառորդ դար առաջ քահանան բացի շարականներ երգելուց՝ ճանապարհին փոքրիկ զանգակներ էլ էր հնչեցնում: Ծննդկանը կանգնում է անկողնու մէջ, և փոխանակ առաջուայ նման համբուրելու քաւորի ոտը՝ փոքր ինչ խոնարհում է և վերցնում երեխան, դնում աջ կողմը մի բարձի վրայ:

Առաջները երբեմնապէս՝ մկրտութեան խորհուրդը տան մէջ ևս կատարելուց յետոյ՝ քաւորը և քահանան նստում էին ծննդկանի անկողնի վրայ՝ մէջք մէջքի տուած և միմի ափս, ձուածեղ ուտում, թէ ինչու՝ չկարողացան ինձ ասել:

Կնուների առիթով հրաւիրուած են լինում 10—20 տղամարդ, նոյնքան կանայք էլ իրենք իրենց են գալիս ծննդկազաւաթ բերելով: Քահանան ու քաւորը տղամարդկանց հետ ճաշում են, ապա կանայք են հաց ուտում ծննդկանի հետ և ցրւում, ասելով. «Աստուած շնորհաւոր անէ», «Աստուած հօրումօր համար պինդ ձեռով պահի»:

Երեխայի անունը սովորաբար քահանան է որոշում շատ անգամ ընտրելով մկրտութեան օրը յիշատակուած սրբերի անուններից: Երբեմն էլ գերդաստանի հայրն է կարգադրում՝ գերդաստանի մեռած մի որեւէ անդամի յիշատակը վերականգնելու ցանկութեամբ:

Ամենագործածական անունները հետեւեալներն են.

ԱՂԶԿԱՅ ԱՆՈՒՆՆԵՐ

Կրճատ ձևը

Կրճատ ձևը

Անահիտ.	Անահի.	Վարդանուշ.	Անուշ.
Թագունի.	Թագուն.	Վարդունի.	Վարթօ.
Թուխծամ.		Եղիսաբէթ.	Եղսօ.
Հրանուշ.		Մարիամ.	Մարիան.
Նանէ կամ		Մարթա.	
Նանուխ.		Գիւլիզար,	Գիւլօ,
Ոսկի.		Թամամ.	

Ոսկեհատ.		Սալվինազ,	Սալբի.
Սաթենիկ.	Սաթօ	Սուսամբար,	Սուսան.
Սիրանուշ	Սիրի.		

ՏՂԱՅՈՑ ԱՆՈՒՆՆԵՐ

Անուշաւան.	Վանուշ.	Նաւասարդիկ.	Նաւօ.
Աշոտ.		Նորայր.	
Ասատուր.	Ասօ.	Պարոյր.	
Արտաւազդ.	Արտօ.	Սմբատ.	
Բաբկէն.		Սուրէն.	
Բուրթէլ.		Վահան.	
Գառնիկ.		Տարսայիճ.	
Գրիգոր.	Գիւքան.	Բենիամին,	Բենօ.
Երուանդ,	Երօ.	Դանիէլ,	Դանէլ.
Ջարմայր,		Մարտիրոս.	
Լիպարիտ,	Լիպօ	Մկրտիչ,	Մկօ.
Լևոն.		Յակոբ,	Յակօ.
Պաշտուր,	Պաշօ.	Յովակիմ,	Աւակիմ.
Կարապետ,	Կարօ.	Պետրոս.	
Համազասպ,	Համօ.	Պողոս.	
Համայեակ,	Վամայեակ.	Սահակ.	
	Համօ.		

Մկրտութիւնից 2-3 օր յետոյ «մեռոնահան» են անում. — տատմայրը լողացնում է երեխային կամ հացի տաշտի կամ մի մաքուր ամանի մէջ և ջուրը ածում կամ թորոնը կամ եկեղեցու աւազանը:

Քառասուն օրից յետոյ «փառսմփահան» են անում ու լողացնում են թէ ծննդկանին և թէ երեխային և սրանց իւրաքանչիւրի գլխին քառասնակս՝ թաս կամ բաժակ ջուր ածում:

Նորածնին առաջին անգամ ծիծ տալիս՝ բերանին ոսկի են քսում, որպէսզի հարուստ լինի, հաց են ք. ում, որպէսզի «դամթով» բախտաւոր լինի: Սովորաբար աղջկան աւելի ուշ են սկսում ծիծ տալ, որպէսզի համբերող լինի: Սովորաբար ¹/₂-2, 3-4 տարի կաթ են տալիս երե-

խային, իսկ աւելի երկար՝ զգուշանում են տալուց, որպէսզի չխմարանայ:

Սակաւակաթ կանայք ուխտ են դնում Քարկոփայ «ծծի խաչը», մոմ վառում, այս քարերից ձգում են ջրի մէջ՝ խմում, աղօթում, որ կաթն աւելանայ:

Եթէ այս միջոցը չի օգնում, սկսում են կովի կաթով կերակրել, և այս դէպքում կաթի մէջ մի քիչ ջուր և շաքար են աւելացնում, երբեմն էլ մի քանի կաթիլ դինի, կամ մի քիչ խաշխաշ, որպէսզի երեխան քնի: Կովի կաթին խմեցնում երեխային «ամզուկով», որ մի եղջիւր է, ծայրին ոչխարի մի ծիծ ամրացրած:

Կաթը սաստիկ առատ եղած միջոցին ուրիշ երեխայի ևս ծծել են տալիս, կթում են, ճիւղ կամ խամ հող են դնում ծծի վրայ, ինչպէս և մի քանի այլ դեղեր են առնում, որ յիշում ենք ժողովրդական դեղերի բաժնում:

Ծծից կտրելիս՝ պղպեղ են ցանում ծծի վրայ կամ ծխամուրճի կեղտ քսում: Հանդերձի կուրծքը կարում են:

Կնոջ կաթը իբր դեղ գործ են ածում, երբ երեխան աղջիկ է.—բամբակը թաթախում են և դնում ցաւոդ աչքի վրայ:

Ծանկանալով, որ երեխան հանգիստ և երկար քնի, մայրը օձի շապիկ կամ նապաստակի տկանջ է դնում նրա բարձի տակ:

Եթէ վատաւողջ է՝ նրան կշռում է փողոցից հաւաքած ոսկորների հետ:

Եթէ «բառանքակոխ» է լինում երեխան, այսինքն՝ սկսում է հետզհետէ նիհարել, երեք չորեքմուտք կշռում են նրան քաջորի հետ: Եթէ ծանրանում է՝ նշանակում է ապրելու է, իսկ եթէ թեթեւանում է՝ մեռնելու է:

Կոխուած երեխային լողացնում են և ապա մի ամուր կնոջ քառասուն բաժակ ջուր են ածել տալիս երեխայի գլխին: Սա քառասներորդ բաժակի ժամանակ թքում է լողացած ջրի մէջ ասելով. «Ջնջուի վատ մարդը, քոռանայ չար աչքը, փչանայ չար նիաթը, չար նազարը»:

Եթէ մի կնոջ երեխաները չեն ապրում, խնդրում է մի դարձնի, որ Աւագ ուրբաթ գիշերը մի «գող» շինէ։ Սա էլ անխօս մի կտոր պողպատի եօթը հարուած է տալիս և ապա մի մանեակ, «գող», շինում, որը այդ կինը 1—2 տարի կրում է պարանոցին, ու ապա հանում, խնամքով պահում։

Այդպիսի ճակատագրական մահից ազատելու համար՝ երեխան աշխարհ գալիս դնում են մի խախալի (ցորենի մաղ) մէջ, ուր լինում են 7 ասեղ, 7 գոյն մետաքսի թել, մի պայտ, մի քուռամեխ։ Ապա այս բոլորը բացի խախալից թաղում են հէնց այդ, ծնունդ տեղում, ասելով. «Դու ըստեղ մնացական ըլես, երեխէն էլ մօր խըտըտին մնացական ըլի»։

Երեխային ջար ալֆից ազատելու համար դիմում են հետեւեալ միջոցներին։

ա. Աջֆանուրումի են կախ անում երեխայի վզից, ուսից, մէջքից։

բ. Թիկնանոց են կարում մէջքին.—Սա մի համայիլ է, եռանկիւնաձև շորի մէջ դրուած, ասեղնագործուած և վերան կապոյտ ուլունքներ ու թելի փնջիկներ կարուած։

գ. Աջքահուլունք (կապոյտ ուլունքներ), կատուի մազ, աղ և հաց կապում են կապոյտ շորի մէջ և կարում աջ ուսի վրայ։

դ. Մի սխտորի գլուխ և մի քիչ շան դէք դնում են սև շորի մէջ և կարում նոյն, աջ ուսին։

ե. Մետաքսի թելով ասեղնագործում են մի երկտակ շոր, նախապէս մի սխտորի գլուխ դնելով մէջը և կարում երեխայի մէջքին։

Դադադան փայտի փոքրիկ կտորի վրայ դանակով զանազան նշխեր են անում և կարում հանդերձի վրայ կամ վզից քաշ անում։

Արդէն աչք տուածին բժշկելու համար խմորը բսում են երեխայի մարմնին և յետոյ ձգում թոնիրը, իսկոյն տը-

րաքուռում է և չար աչքի ազդեցութիւնը ոչնչանում: Նոյն նպատակով հրաւիրում են աղօթող կանանց՝ աղօթելու:

Երբ երեխաները ինքանքն են լինում, այսինքն կատարում են և մեռնում, նոր ծնուելիք երեխային այդ կորուստից ազատելու համար յղի ժամանակ իշի կամ ձիու կաթ են խմում, կամ նորածնին կշռում են մի մորթած հաւի, կամ քաքորի հետ, երեխային դնում մօր աջ կողքին, իսկ հաւը կամ քաքորը տանում գերեզմանատանը թաղում:

Երեխայի առաջին ատամները երեւալիս մայրը շեւեռահատիկ է անում.—սխեռ ու ցորեն խաշում են, քամում և լցնում երեխայի գլխին, նախապէս մի շոր ձգելով: Նրան շրջապատած երեխաները հաւաքում են այդ հատիկները, ոմանք էլ ասում:

Ատմհատիկ,
Սիրուն թաթիկ,
Ուտենք հատիկ,
Որ ատամիկ
Հեշտ տայ տղիկ:

Պաշիկում հատիկը ածելիս՝ երեխայի առաջ մի սանր և մի դանակ են դնում. եթէ նախ սանրը վերցնի, գուշակում են, որ քոյր է ունենալու, իսկ եթէ դանակը՝ եղբայր:

Երբ ատամը վայր է ընկնում, ձգում են թոնրի սնուածքը՝ ասելով. «Առ քեզ ոսկուէ ատամ, տու ինձ ոսկէ ատամ»:

Կամ՝ դնում են տան դռան ճխանի տակ և դուռը տարուբերելով ասում.

Ես քեզ տամ շան ատամ, դու ինձ տու գառի ատամ:

Երբ երեխան ոտ է ելնում, ձեռից բռնում են, կանգնեցնում ասելով:

Ա՛ թէ,
Ոտի տակը վարդ է.

Կանանչներով զանգ է.

Մօրըդ համար դարդ է:

Երբ երեխան ժամանակին ոտ չի ելնում, ջրադացից ալիւր բերելիս երեխայի երկու ոտը կապում են և դնում ալիւրի վրայ, և դանակով կտրում թելը, դանակը ձգում ոտների տակ և երեխային ալիւրի վրայ թողնում փախչում: Այս միջոցին մի ուրիշը մօտ է վազում և վերցնում երեխային:

Ոմանք էլ նոր գործած գորգն կտրելիս՝ երեխայի ոտները դնում են տորքի մէջ և գորգը կտրում:

Շատերը «ճըռռան» են շինում, որ երեխան բռնի ու ման գայ:

Երբ երեխան ուշ է սկսում թոթովել, եկեղեցու բանալին են քսում բերանին և կամ խմորոտ ձեռները լուանում են և ջուրը խմացնում երեխային:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Ականջացաւ.—Օղի են կաթեցնում ականջի մէջ և կամ կովի իւղ ածում:

Ամբուքեան դիւ.—Սինամաքի են եփում և խմացնում շաքարով:

—Կովի հում կաթ կամ կովի հալած իւղ և կամ դարալալու կոչուած տերեւները եռացնում են և ջուրը խմացնում:

Ամբուքեան ժամանակ տաքութիւնը կտրելու համար ուռնու տերեւները եփում են և նրա ջրով լողացնում:

Այրուածը բուժելու համար իշի ականջը կտրում են և արիւնը քսում այրուած տեղը:

—Խամ հողը թոնրի վրայ խանձում են և ապա շաղախում, դնում այրուածի վրայ:

Աչքացաւ.—Կարմիր ներկ (դրմըզ) են քաշում աչքին:

—Շիւր են քցում աչքը:

—Դեղին կոճը ծեծում են, ցանում խաշած և կիսած ձուի վրայ ու դնում մրսած աչքի վրայ:

Աչքեր ուռչելիս եփած ձուն կաշում են, կիսում և տաք տաք

դնում աչքերի վրայ: Իսկ մի քիչ յետոյ մեղրածոր քաշում աչքերին:

Ասամնացաւ.—Աֆիոն են դնում աստամի վերայ, որ ցաւը կտրում է և յետոյ աստամը կոտրատում, թափում:

Արեցողութեան դեմ. Մարդի արիւն են կաթեցնում գինու մէջ և անգիտակցօրէն խմացնում հարեցողին:

Բկացաւ.—Իւշով ճմլում են:

—Շլորաթթու են կապում վերան:

Դիւացաւ.—Քթախտի նման աղ են քաշում քիթը:

—Մեծած սոխ են կապում ճակատին:

—Քթախտ են քաշում:

—Քաղախ են քսում ճակատին:

—Ձիւն, սառոյց են քսում ճակատին:

Գոռնուկը համարում են և սրա թւի համեմատ քնաք են անում մի ուրի վրայ ու ճխտում գոմի առիքը, հաւատարկով, որ երբ ուռի ճիւղը չորանայ, կը չորանայ նաև գորտնուկը:

Թունաւորուածին մածուն, կաթ և կամ թան են խմացնում: Լուծելու դեմ.—Չորաթան են խմացնում:—Սխեռը աղանձում են, կամ վայրի տանձը չորացնում, աղում, մեղրով շաղախում և ուտում են:

Խաբբուխ.—Գլուխը տաք ջրով լուանում են և փաթաթում:

Կաւմիւր քամի.—Էրմ մի գիլի կոչուած կարմիր ցիխը մանրացնում են և քսում երեսին:

—Ածելիով կտրատում են երեսը:

—Հաւը կամ շան ձագը սպանում են, կուրծքը ճղում, փորոտիքը հանում են և տաք տաք կապում երեսին:

Հազի դեմ.—Նզան լեզու կոչուած բոյսի սերմը թէյի պէս պատրաստում են և խմում:

—Պորոված սոխ, կամ տակ և կամ սերկևիլ են ուտում:

Հաւկուռ.—Մի երեխայ մի թուկ է ձգում հաւկուր ընկնողի վիզը և քաշ տալի դէպի աղբիւրը: Սա չորքոտանու նման, երբեմնապէս հաչելով դնում է և աղբիւրից շան նման ջուր խմում և նոյն կերպ վերադառնում:

—Հաւերի հետ կուտ է ուտում:

Ձայնը կտրելու դեմ.—հում ձու են խմում:

Ջիւմ.—Վառօղը մեղրի հետ շաղախում են, դնում արևի տակ թթւում է, յետոյ քսում են ջերմողի մէջքին:

—Ջերմողի մէջքին պուլիկ են դնում և ապա օդի քսում:

—Իշակաթնուկ են խմացնում, որպէս զի սիրտը յետ դայ:

նոյն նպատակով ուտեցնում են նաև միմեանց հետ խառնած մեղր, աղ և ծխախոտ:

Ձեռքի ճաքնոց.—Մեր (ուսման) կամ ճրաքու են քսում:

Մազմազակ.—Այսպէս կոչուող ճանճը, որ առաւելապէս ոչ-խարների հետ է լինում, երբ կծում է մարդկանց, առաւելապէս քթի և երբեմն աչքերի մէջ, իսկոյն կծած տեղը որթնոտում է: Բժշկելու համար փունդատ կոչուած խոտի սերմով ծուխ են տալիս, ածում են կրակի վրայ և իրենք սաւանով ծածկուած կանգնում վերան, որպէս զի ծուխը արգելուելով սաւանի մէջ բուժէ վէրքը:

Մալի կծած.—Ոչխարի վրայից ընկած տղրուկը, որ միառժամանակ բաղցած մնալով երկարում և լղարում է, թունաւոր կերպով կծում է մարդկանց: Մրանից ազատուելու համար սառը ջուր են ածում կծած տեղը և կաթ խմում, շաքար, չամիչ ուտում, որ յետ դայ:

Շան կծածի.—բակլան երկու կտոր են անում և շան կծած տեղը դնում:

Մրի կտածի.—Մեղրի մէջ աղած շիբ են խառնում և դնում վէրքի վրայ:

Վալսի դիւ.—Մեռելից վախեցածից տանում են մի որևէ նոր ննջեցեալի գերեզմանի մօտ, վերցնում այդ գերեզմանից մի քիչ հող և դնում մի կոյսի գերեզմանի վրայ մի քիչ ցախ վառում, խունկ ծխում, և ապա այստեղից էլ մի քիչ հող վերցնելով առաջին գերեզմանից վերցրած հողի հետ շաղախում և քսում վախեցածի վզին, ձեռներին և ոտներին ու ապա ուրիշ ճանապարհով վերադառնում:

Տափակ ուր.—Բալանդի բա՛րի կոչուած պղպեղանման բոյսի չորացած հատիկներ, քիչմիշ և ընկոյզ հնգական մսխալ խառնում են միմեանց, սանդում մանրացնում, շաղախում և առաւօտը անօթուց ընդունում, նախապէս երեկոյին միմիայն 2 բաժակ կաթ խմելով: 3-4 ժամից յետոյ էլ լուծողական են խմում:

Տրթի քաղածի.—Գոմէշի կղկղանքը տաք տաք քաշում են ցրտի տարած մասերի վրայ:

Եթէ աչքերն են ցուրտը տարել, գինին եռացնում են, ապա հովացնում և քաշում աչքերին:

Նաև սառուց են դնում աչքերի վրայ:

Փռացաւ.—Արաղի սապոնը քսում են մի շորի վրայ և կապում փորին:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Հիւանդին այցելութեան գնալը սաստիկ ընդունուած է և այցելողները ոչ միայն չեն զգուշանում վարակիչ հիւանդութիւններէ, այլ և այցելելիս այնքան երկար են նստում և այնպիսի հարցերի մասին խօսում, որ շատ անգամ վրդովում են և նեղութիւն պատճառում հիւանդին:

Հոգեվարքը թեթևացնելու համար հիւանդի մօտիկները հեռանում են նրա մօտից, զսպում են իրենց արցունքը, մայրը իւր ծիծը քսում է մեռնողի շրթունքին ասելով. «Ծիծս քեզ հալալ լինի», եթէ նշանած է՝ նշանածին բերում են մօտը, օտարութեան մէջ եղողի շորերը ձգում վերան:

Եթէ հոգեվարքի ժամանակ սաստիկ լաց լինեն, հիւանդը կարող է հոգեդարձ լինել, այս դէպքում ջուր են խմացնում, որ հոգին աւանդէ:

Մեռնելու լուրը առնելուն պէս՝ տնեցիները թափում են ննջեցեալի վրայ, սաստիկ լալիս, բղաւում, ննջեցեալին շարժում, կարծես կամենալով դարթեցնել:

Անմիջապէս՝ մինը ծածկում է ննջեցեալի աչքերը՝ եթէ բաց են մնացել, փակում բերանը, շորերը հանում, կին ննջեցեալի գլխին մի շալ փաթաթում:

Մի քիչ յետոյ հրաւիրում է քահանան, որ հոգոց է ասում և օրհնում մի թաս ջուր: Ապա ննջեցեալին տանում են մի առանձնացած տեղ՝ լողացնելու. պառկեցնում են մի տախտակի վրայ, երեսը դէպի արևելք դարձրած:

Սովորաբար լողացնողները երեք հոգի են լինում, կնոջը՝ կին, տղամարդունը՝ տղամարդ: Թէպէտև լողացնելու համար յատկապէս ջուր են բերում, սակայն չեն կատարում այն մի քանի նախապաշարմունքները, որ ընդունուած են ուրիշ գաւառներում. միայն, երբ ննջեցեալը տանում են լողացնելու, նրա տեղում մի քար են դնում, չորպէսզի նրա յետեից ուրիշը չմեռնի:

Լողացնողները նախ և առաջ լուանում են իրենց ձեռները, ապա նրանցից մինը բռնում է ննջեցեալի երկու ձեռքը, երկրորդը ջուր ածում, իսկ երրորդը մի ձեռնոց— ալճակ—անցկացնելով սկսում է լողացնել, միայն ամենից առաջ երեք անգամ ջուր է ածել տալիս ննջեցեալի աջ ձեռի մէջ և բարձրացնում, նոյն ձեռով երեսը լուանում, իրը թէ ննջեցեալը ինքն է լուացւում և սրբւում մեղքերից:

Ապա լուանում է ամբողջ անդրին, ու ձեռնոցը հանում դնում ծծի մօտ: Յետոյ մի ուրիշ ձեռնոց է անցկացնում, և սրանով էլ ներքին մասը լուանում, ու ձեռնոցը դնում սեռական անդամի վրայ: Ապա ննջեցեալին նստած դիրք են տալիս և քահանայի օրհնած ջուրը ածում գլխին: Յետոյ կաթսան բերնքովայր և սրա վրայ թասը նոյն կերպ դնում են ու այդպէս թողնում մինչև եօթը տալը:

Ննջեցեալին լողացնելուց յետոյ հազցնում են շապիկ, շապլնկեր և ապա պատանքում, նախապէս այդ կտորը երեք անգամ մեռելի վրայից իրար ձգում «Աստուած ողորմի» հողուն ասելով: Աւելացած կտորը պահում են և 3 օրից յետոյ լողացնողին տալիս: Պատանքի կուրծքն ու երեսը չեն կարում, այլ ասեղը վերան շուլուլած թողնում են, եկեղեցում կարելու: Ուրիշ տեղերի պէս խաչաձև ուսկապ չեն կապում, միայն երեսայի պնչի մէջ և աչքերի վրայ բամբակով փաթաթած խուսկ են դնում, ձեռքերին միմի մոմ տալիս. միայն նախապէս մոմը վառում են, յետոյ նրանից միւսը վառում, և ձեռքով հանգցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը երկրորդից և վերջինս հանգցնում, յետոյ կրկին վառում առաջինից և երկուսը միմեանց մօտեցնում ու միասին հանգցնում:

Ննջեցեալին պատանքելուց յետոյ «ղոշորոյնուղ» կոչուած գունաւոր կապերտի մէջ փաթաթում են և պառկեցնում նաչի կամ դագաղի մէջ, նախապէս մի բարձ դրնելով գլխի տակ և երեսքաշը (վառ) քաշում երեսին:

Մեծ մասամբ նաշով են տանում գերեզմանատուն և միայն շատ քչերին թաղում դագաղով: Երիտասարդի դագաղի վրայ կարմիր, իսկ ծերերնը՝ սև կտոր են քաշում: Հանդերձներ հագցնում են նշանուած, նորապսակ կամ մի հատիկ երիտասարդներին, այն էլ ոչ միշտ: Մեռած քահանայի կրծքին աւետարան, շուրջառ և գաւազան են դնում:

Սովորաբար նոյն, մեռած օրը, տանում են եկեղեցի: Երեխաներին նոյն օրն էլ թաղում են, իսկ չափահասներին պահում են 2—3 օր, կամ եկեղեցու և կամ նրա մօտ մի սենեակի մէջ:

Տան մէջ թաղման կարգը կատարելով տղամարդիկ վերցնում են ննջեցեալին և ձեռներին բռնած (և ոչ թէ ուսերին դրած) տանում եկեղեցի, և դնում երկու աթոռների վրայ, սնարի և ոտների մօտ մի-մի մօմ վառում:

Ապա բոլորը վերադառնում են ննջեցեալի տունը, ուր քահանան հոգոց է ասում և այժմ միայն ցրւում են:

Քանի ննջեցեալը եկեղեցում է, պառաւ կանայք թելով չափում են իրենց հիւանդներին և տանում այդ թելը դնում ննջեցեալի պատանքի մէջ, որպէսզի այս հիւանդների ցան էլ նա հետը տանի: Այս նախապաշարմունքից յառաջացել է «ցաւդ տանեմ» փաղաքշական դարձուածքը, որ բաւական տարածուած է: Եւ այս հաւատը այնքան խոր է, որ շատ անգամ ննջեցեալի տէրերը որոնում են և այդպիսի թելերը հանում պատանքի միջից դէն շարժւում, որպէսզի իրենց ննջեցեալը նեղութիւն չկրի:

Թաղման օրը կին ննջեցեալի գլուխը սովորական ձևով կապում—յարդարում են, իսկ տղամարդի՝ միայն միրուքն են սանրում: Նախ քան պատարագը՝ մօտիկ կանայք համախմբուելով ննջեցեալի տանը՝ դնում են եկեղեցի, չատերը տանելով իրենց հետ սուսամբար և այլ ծաղիկներ, որ դնում են ննջեցեալի կողքերին: Այստեղ երկար լաց են լինում, ողբեր ասում և ապա վերադառնում տուն, ուր մնում են մինչև պատարագի աւարտը, երբ կրկին գալիս

են եկեղեցի, և այս՝ այն պատճառով, որպէսզի իրենց լացով չխանգարեն ժամասացութիւնը:

Պատարագի ժամանակ ննջեցեալի բարեկամները մոմեր են դնում և վառում դագաղի շուրջը: Պատանք կարողը 50 կողէկ կամ մի բուբլի առնելով մեռելատիրոջից՝ դնում է մեռելի աջ բութ մէջ, ձեռքը փոքր ինչ ուղղելով: Յետոյ երբ քահանան «աշխարհ է գալիս», («Բարեխօսութեամբ» երգելով Թափոր անելիս) կանգնում է ննջեցեալի մօտ և հոգոց ասում լռելեայն, ապա մի նշխարք է դնում ննջեցեալի բերնի վրայ և վերցնում նրա բռում դրբուած դրամը: Այս ժամանակ մինը ասում է. «Յիշեսջիր գմեզ առաջի անմահ գառին Աստուծոյ»: Քահանան էլ պատասխանում է. «Յիշեալ լիցիս առաջի անմահ գառին Աստուծոյ»: Վերաբերումի ժամանակ ննջեցեալի տէրը դնում համբուրում է Աւետարանը: Պատարագն աւարտելուց յետոյ պատարագիչ քահանան հանում է եկեղեցական զգեստը և միայն մի սուրջառ առնելով վերան՝ գալիս կատարում Թաղման կարգը:

Նրա կտրած վարշամակը վերցնում է ննջեցեալի սեռից մի մարդ, դնում մեռելի երեսին և պատանքի կուրծքն ու երեսը կարում և ասեղը շուլուլում ճակատին, և ապա երեսքաշը քաշում վերան:

Յետոյ շատ անգամ գանձ են ասում և խաչհամբոյրը՝ ձգում ննջեցեալի դագաղի վրայ դրուած գանձանակի մէջ: Գանձի հետ միասին կանայք էլ շրջապատելով ննջեցեալը՝ սաստիկ լալիս են և ողբեր ասում: Խաչիկում իբր ողբոց մայր յայտնի են Խստոն (Իսկուհին) և Շողբեր, որ գրեթէ բոլոր մեռելների վրայ գնում են ողբալու:

Թաղումից յետոյ վերադառնում են ննջեցեալի տունը, ուր տղամարդիկ լուանում են ձեռները և անմիջապէս նստում հոգու հացը՝ ուտելու: Այս սովորութիւնը դեռ ևս չէ վերացել այս բնիկների մէջ: Սովորաբար մորթում են մի եզ կամ կով և կամ 4—5 ոչխար, նախապէս նրանց բերանը ձգելով քահանայի օրհնած աղբ: Սակայն չբաւա-

Հանանալով այս օրհնուած աղով, քահանան կրկին հրաւիրուած է օրհնելու կաթնայով դրուած կերակրները, որ լինում են բոգբաշ և դովա կամ փլաւ: Քահանան սեղանը օրհնելուց յետոյ մի-մի բաժակ օղի են մատուցանում, որ խմում են «Աստուած հոգին լուսաւորէ» բարեմաղթելով: Ճաշից յետոյ քահանան կրկին օրհնում է սեղանը և ապա ամբիժք կատարում, որից յետոյ ցրում են, ձեռք տալով տանուտիրոջը և ասելով. «Աստուած քո մնացողդ պահի»:

Թաղման երկրորդ օրը, առաւօտեան վաղ, կանայք գրնում են գերեզմանատուն, շրջապատում գերեզմանը և եղբեր ասելով սգում: մի քիչ յետոյ գալիս են նաև տղամարդիկ քահանայի հետ միասին: Վերջինս կատարում է այգը կամ «յիգնահողէքը», յետոյ վերադառնում են մեռելատիրոջ տունը ճաշում, և ցրում:

Թաղման օրից մինչև եօթներորդ օրը՝ հոգին աւանդած տեղում շարունակ ճրագ (լիս) են վառում, ամեն երեկոյ խոնկ են ծխում: Ննջեցեալի մօտիկները գործ չեն անում, ճախարակ չեն մանում, տղամարդիկ չեն սափրուում: Ամեն երեկոյ քահանան եկեղեցում ամբիժք է կատարում և գալիս սգուորի տուն՝ մխիթարելու Գալիս են նաև բարեկամները՝ հերթով զանազան կերակրներ և խմամիջք բերելով, որով հիւրասիրւում են բոլորը: Այս եօթօրուայ ընթացքում ընթրիք է տրւում նաև գերեզմանահատներին (հողհատ) և ննջեցեալին լողացնողներին:

Եօթներորդ օրը «օխտն են տալիս» — եօթն են կատարում: Ամառը երբեմն այս կարգը հինգերորդ օրն են կատարում, որպէսզի աւելի շուտ կարողանան վերսկսել աշխատել, որովհետև սինչև այդ՝ իբր սգուոր՝ ոչ մի գործ չեն անում:

«Եօթը» կատարելիս՝ սովորաբար պատարագ են մատուցանել տալիս, որից յետոյ տղամարդ բարեկամները քահանայի հետ գնում են գերեզմանատուն, օրհնում գերեզմանը և վերադառնում սգուորի տունը՝ հոգու հացը ուտելու,

որը բաղկացած է լինում ուտիսին՝ միայն բողբաջից, իսկ պապին՝ ձիթով փլաւից կամ սխեռով շորվայից:

Նախ ճաշում են տղամարդիկ և ապա կանայք: Ապա մօտիկ կանայք ջուր են տաքացնում, անպատճառ այն կաթսայով, որ գործ էին ածել ննջեցեալին լողացնելու համար ջուր տաքացնելիս: Սովորաբար սանամէրը լուանում է ննջեցեալի հանդերձները և տեղաշորը, իսկ միւս մօտիկ կանայք լուանում են սրգուորների գլուխները, տղամարդիկ էլ կանչում են սափրիչին՝ և սափրել տալիս սգուոր տղամարդկանց մօրուքները:

Սրանից յետոյ արդէն վերսկսում են աշխատել:

Ննջեցեալի հանդերձներից մի քանի կտոր տալիս են մեռելը լողացնողներին և գերեզմանահատներին, իսկ քահանային միայն երեսքաշը («վառը»):

Մինչև մահուան քառասներորդ օրը սգուորները եկեղեցի չեն գնում: Այդ օրը բարեկամ կանայք և տղամարդիկ գալիս են և նրանց եկեղեցի տանում, ուր քահանան ամբիօք է կատարում:

Ամբողջ մի տարուայ ընթացքում ամեն կիրակի բարեկամ կանայք հաւաքւում են սգուորների տանը, միխթարում սգուորներին, գնում գերեզմանատուն, խունկ ծխում, լաց լինում, և ապա վերադառնալով տուն՝ առանց հաց ուտելու ցրւում:

Հինգ նաւակատիքներին և նաւասարդին բարեկամները գնում են սգուորի տունը՝ ամեն մինը այս տօներէց մինում մի որևէ ընծայ տանելով: Հրաւիրւում է քահանան, հոգոց ասում և մասնակցում բարեկամներին տուած ճաշին:

Մեռելոցներին ամեն ընտանիք զանազան կերակրներ, գաթայ, հալուայ, գինի և օղի առած գնում է գերեզմանատուն, այդ բոլորը դարսում իւր մեռելի գերեզմանի վրայ և հրաւիրում քահանային՝ օրհնելու գերեզմանը, որից յետոյ ստիպում է ուտել և խմել գերեզմանի վրայ դրածներից: Յետոյ երբ բոլորի գերեզմաններն էլ այս-

պէս առանձին, առանձին օրհնում են, բոլորը հաւաքուում են մի ընդհանուր սփռոցի շուրջ, խառն դարստութեամբ իրենց բերած կերակրներն ու խմիչքները և միասին ճաշում, որից յետոյ սեղանակցող քահանան կատարում է հոգեհանգիստ բոլոր ննջեցեալներին համար: Սեղանի մնացորդները տալիս են աղքատներին:

Ձարչարանաց շաբաթի Աւագ ուրբաթ օրը բարեկամները կրկին հաւաքուում են սգուորի տունը՝ թէ՛ ննջեցեալին սգալու և թէ՛ մօտիկներին՝ մխիթարելու: Կանայք ողբեր են ասում, լաց լինում: Քահանան գալիս է և հոգոց ասում:

Ս. Խաչի ուրբաթ օրը կրկին գնում են սգուորի տունը, «սըզահանէք»—զանազան թխուածքներ—տանելով: Քահանան հոգոց է ասում և մասնակցում բոլորին մատուցուող ճաշին:

Նոյն ս. Խաչի կիրակի օրը, առաւօտեան «խրով» են անում.—մարմանդ թոնրի մէջ կախում են մի մաշկած և փորոտիքը մաքրած ուլ, տակը ձաւարով լի մի կնուճ դրնելով: Այդ ուլի մի բուզը տալիս են քահանային, միւսը՝ որ մեռելափայ է կոչւում, պահում, իսկ մնացածը նոյն օրը ուտում: Կեռեւեալ օրը, մեռելոցին՝ այդ «մեռելափայ» բուզը և այլ ուտելիքներ ու խմիչքներ առած՝ գնում են գերեզմանատուն, ուր մի ընդհանուր սփռոցի շուրջը բոլորելով՝ ճաշում են նախ տղամարդիկ և ապա կանայք, յետոյ հոգեհանգիստ են կատարում բոլոր ննջեցեալներին համար: Սեղանի մնացորդները տուն չեն բերում, այլ տալիս են աղքատներին:

